ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիոյ և Ռուսիոյ համար տարեկան 23 ֆրանգ
Ուրիշ ամեն տեղերի » » 20 »
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիրները կանխիկ կը վճարուին։ Վերամեայ կամ եռամեայ բաժնօրդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 46

1886 ՓԵՏՐՎԱՐ 23

(ՓԵՏՐՎԱՐ 11 Հ. Տ.)

ՀԱՅԹԱԹԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբ. և Երե. օրեր

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիծը 1 սանդիմ կարժէ։ 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով։ M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ-Ֆրանսերէն լրագիր.—Թուսիա եւ 61 րդ յօդուած.—Եւրոպա եւ Արմենիա (բարգմ. Voltaire լրագրէն).—Ղամակ Թուսիաէն (բարգմ. Soleil լրագրէն).—Ղամակ Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն (Աբլպօթօ).—Ղամակ Անգլիայէն (Լօնտօն).—Մուրացի գրութիւն մի նոր ապացոյցը Զանի մէջ.—Ֆրանսական յուշեր.—Տեղական.—Արեւելեան խնդիր.—Արտասահմանի յուշեր.—Ծանուցումներ։

ՀԱՅ-ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼՐԱԳԻՐ

Մեր բաժնորդներէ և բարեկամներէ ամենք փափաք կը յայտնեն մեզ որ «Արմէնիա»ի կէսը հայերէն և կէսը ֆրանսերէն լինի։

Աւելորդ չենք համարիր այդ առիթով մի քանի տող գրել «Արմէնիա»ի մէջ որով ամենին մեկէն պատասխանած կը լինինք։

Մեզ համար աւելի հանգիստ և աւելի դիւրագին կը լինէր թերթին կէսը ֆրանսերէն կամ ամբողջ թերթը ֆրանսերէն հրատարակել, քան թէ մի հայերէն թերթ հրատարակել Ֆրանսայի մէջ։ Սորա դժուարութիւններ նոքա միայն կարող են ըմբռնել որոնք հայերէն տպագրական գործերի ձեռնարկած են հայութեան կեդրոններէ հեռի երկիրների մէջ։

Այլ սակայն չնայելով ֆրանսերէնի տպագրական դիւրութիւններին, մենք աւելի արդիւնաւոր և օգտակար կը համարինք ամբողջ թերթը հայերէն հրատարակել քան թէ կէսը հայերէն և կէսը ֆրանսերէն։

Բացատրենք մեր միտք։

Թերթը ո՞ր ազգի համար պիտի հրատարակուի։ Եթէ հայերէն համար, նոյա զրկած կը լինինք կէսը ֆրանսերէն հրատարակելով դի ֆրանսերէնի բաժնին մէջ ի հարկէ պիտի դրուին այնպիսի տեղեկութիւններ որք հայերին ալ հետաքրքրական լինելով հայերէն բաժնին մէջ ալ դրուած կը լինեն. համայնպիսի տեղեկութիւններ որոնք հայերին հետաքրքրական չեն։ Ուրեմն հայ բաժնորդները պիտի զբաղնեն ֆրանսերէն բաժնին մէջ կամ իրենց անհետաքրքիր կամ իրենց հայերէն լեզուով կարդացած լուրերը և այս կերպով կէս թերթ միայն ստացած պիտի լինեն ամբողջ թերթի տեղ։

Այդ, քննենք թէ հայ բաժնորդներին եղած այս դրութիւնը օգտակար կը լինի՞ ո՛չ կրկին։

Եթէ թերթին կէսը ֆրանսերէն հրատարակելով, մեր նպատակ պիտի լինի հայկական խնդիրը լրագրի միջոցով արձագանգել ֆրանսական հասարակութեան մէջ, մեր նպատակ չատ լաւ, բայց մեր ընտրած միջոց ապարդիւն կը լինի։

Շատ դիւրին բան չէ մի ֆրանսերէն լրագիր հրատարակել Ֆրանսայի մէջ, ուր ահագին մեծ դրամագլուխ ունեցող ընկերութիւններէ կը հիմնուին լրագիրները, և մրցելով ֆրանսերէն ամենաստահակ ժամանակագրութիւնների հետ, յաջողիլ մեր թերթի տարածելու։

Հայ լրագրութեան նեղքին միճակին վրայ ճիշդ տեղեկութիւն չունեցողները և այդ գործի վրայ հետաքրքիր միայն նայողները կրնան այդ նկատմամբ չատ փափաքներ տածել, բայց գործին մէջ գտնուած և փոքրիշատէ փորձառութիւն ստացած մարդիկ տարրերը կերպով կը մտածեն։

Ֆրանսերէն թերթերի ամենամեծ մասը նուիրուած է Ֆրանսայի վերաբերող լուրերի և մտածութիւնների։ օտար երկիրներու համար չատ քիչ տեղ կուտան դի Ֆրանսայի ընթերցողներն աւելի իրենց հայրենիքի նկատմամբ կուզեն կարդալ քան թէ ուրիշներու։ Այդ, եթէ մի հոյլ հիմնուած ֆրանսերէն թերթը հայերի մասին չատ սիրով գրէ, Ֆրանսայի ընթերցող չատ չկրնար ունենալ և տարածուիլ։ Իրաւ է որ Ֆրանսայիներ չատ կը կարդան, բայց ամեն գրքերը և ամեն թերթ չեն կարդար։

«Արմէնիա»էն աւելի պարտնեակուած ունեցող մի ֆրանսերէն թերթ 5 սանթիմ կը ծախուի, մինչդեռ «Արմէնիա»ի մեկ թիւը կարժէ դրեթէ 20 սանթիմ տարեկան բաժնորդագնին համեմատ։ 5 սանթիմանոց ֆրանսերէն թերթերը 50,000 էն մինչև 1,000,000 (մեկ միլիոն) ընթերցող ունին և այնչափ չատ ծանուցումներ կը տալին լաւ վճարումներով որ եթէ թերթը դրեթէ ձրի ալ տան ընթերցողներին, դարձեալ մեծ դումարներ կրնան շահիլ։ Իսկ «Արմէնիա» հայ թերթը ունի այժմ դրեթէ 300 բաժնորդ և կը ծախուի հատը 20 սանթիմ։ Ֆրանսերէն թերթերի քառապատիկ դնոքը ծախուելով հանդերձ, «Արմէնիա»ի խմբագրութիւնը այնչ չշահիլ գատ, արդի վիճակին մէջ ամեն մեկ թիւը դրեթէ 10 սանթիմ ալ ձրատ կանէ. այսինքն, արդի վիճակի մէջ, իւրաքանչիւր թերթի իրեն կարժէ 30 սանթիմ (չհաշուելով խմբագրութեան աշխատութիւնը համար վճարուելիք վարձը)։ Ուրեմն խմբագրութիւնը Մարսէյլի պես մի բազմածախ քաղաքի մէջ ձրիապես աշխատած լինելէ յետոյ, ամեն մեկ թիւն իւրաքանչիւր օրինակին համար 10 սանթիմ ալ վրայ տուած կը լինի իւր կողմէ, թերթը կարդացուելու համար։ Ճանկացողներին կարող ենք մանրամասն հաշիւը տպագրել։

Այդ, հասկնալի է որ այսպիսի պայմանների մէջ ֆրանսերէն թերթի հրատարակութիւնը, Ֆրանսացիների մէջ տարածելու նպատակով, անհնար է, քանի որ պէտք կը լինի մրցիլ ֆրանսական լրագիրների հետ որոնք այս ինչ կամ այն ինչ կուսակցութեան պատկանող մարդերը ընկերութիւնէն կազմելով և տհաղին դրամագլուխներ մէջտեղ դնելով կը հիմնեն և բնականապէս բոլոր ընկերներն ալ ամեն չափ կանխիկ իրենց կուսակցութեան թերթը տարածելու համար. թերթին վաճառութիւնն ալ այդ նպատակի համար արտակարգ ծախքեր կանէ։

Խմբագրութեան կարծիքով, եթէ կուզենք եւրոպական մի լրագրով ծանօթացնել հայկական խնդիրը եւրոպական հասարակութեան մէջ, փոխանակ ֆրանսերէն մի նոր թերթ հրատարակելու, մեր ժողովրդի պայմաններին աւելի նպատակաւոր, աւելի դիւրին և չատ աւելի արդիւնաւոր կը լինի յօդուածները և տեղեկութիւնները դրել եւրոպական մեծ թերթերին մէջ որք արդէն 100,000 նեղ ընթերցողներ ունին և որք կը կարդացուին գրեթէ ամեն դաստակարգի մարդերէն, նոյն իսկ բարձր առթուններուն վրայ պատասխանատու դիւանագէտներէն։ Հետևապէս, մեր կարծիքով, չատ մեծ ծառայութիւն մատուցած կը լինին այս նկատմամբ նոքա որք կը դրեն եւրոպական մեծ լրագիրներին մէջ։ ինչպէս Մ. Ե. Կ. Յակոբեան Լօնտոնի Թայմսին, Տէյլի Նիւսին, և այլն ի մէջ և ֆրանսական հայեր Temps ի, Evénement ի, Voltaire ի, Sémaphore de Marseille ի մէջ և այլն։

«Արմէնիա»ն կը հրատարակուի հայերին համար։ Խմբագրութիւնը գոյն հեռու է ֆրանսական ազատ հողին վրայ, ոչ թէ ֆրանսացիներէն, այլ հայերին համար։ «Արմէնիա»ի նպատակն է հայերը իրարու ծանօթացնել և իրենց մտածութիւնը ազատօրէն իրարու հաղորդելու մի միջոց դառնալ։ եւրոպական հայերին յիշեցնել միշտ իրենց մայր-հայրենիք և նոցա մէջ միութեան մի կապ հաստատելուն աշխատիլ։ Իւր այս հանճար չնչագիծէ չատերը դուրս հանել «Արմէնիա»ն և չատ երջանիկ պիտի համարի իրեն եթէ յաջողի ՀԱՅԵՐԻՆ ՅԱՆՁՈՒԹՅՈՒՆՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և նոցա մտածումի առարկայ դարձնել զայն։

Իսկ նոցա որք կը փափաքին այնու ամենայնիւ ունենալ մի հայ-ֆրանսերէն թերթ, մենք խորհուրդ կուտանք, փոխանակ «Արմէնիա»էն պահանջելու այդ բան որ դուրս է իւր նպատակէ, քաջալերել Փարիզի ԻՐՈՒԻՈՒՆԻ (Le Droit) հայ-ֆրանսերէն լրագիրն որ չատ աւելի դիւրաւ կարող է մրցիլ Փարիզի մէջ հրատարակուող ֆրանսերէն լրագիրներուն հետ և այդ կերպով տարածուիլ օտարազգիներուն մէջ և, ծանօթանալ նոցա, որչափ կարելի է, հայկական խնդիրը և որ արդէն ունեցած է այդ կերպով իւր գոյութեան իրաւունքը։

Մ. Փ.

ՌՈՒՍԻԱ ԵՒ 61-ՐԴ ՅՕԴՈՒԱԾ

Անգղիական լրագիրներուն մէջ կը տեսնենք Ռիմթէրի պատմակալութեան Կ. Գօլսէն յունվար 16 ին գաչած հետևեալ հետագիրն.

«Ռուսական և Հայկական չէջանակներուն մէջ կը հասատատեն, բայց Դուբլն կը հերքէ թէ Գ. ա. Նելիւօֆ Հայաստանի բանեցարտուններուն համար Պետրմի դաշնագրութեան 61րդ յօդուածի պարագրութիւնը կը յանձնարարէ Թիւրք կառավարութեան»

Լօնտոնի «Տէյլի Գրաֆիքը» լրագրի Վիէննայի թղթակիցն յունվար 18 ին հետևեալն կը հետագրէ.

Տեղեկութիւններ կուգան Կ. Գօլսէ թէ ուսական դեսպան Գ. ա. Նելիւօֆ Դրան տեղեկագիր մը ուղարկած է, որով Պետրմի դաշնագրութեան 61րդ յօդուածի անմիջական դր-

ծագրութիւնը կը պահանջէ։ Կըսուի թէ ռեզիկպլին, Դրան և Կ. Պօլսի դիւանագէտների չրջանակներին մէջ չատ ցաւագին զարմացում պատճառած է։

Սոյն օրինակ հեռագիրները նոյն օրի «Սթանդարտ» և «Տէյլի Նիւս» լրագիրներին մէջ ևս կան, որոնց ամենէն լուրերն ալ վիճենաէն են։

ԵՒՐՈՊԱ ԵՒ ԱՐՄԷՆԻԱ

(Թարգմ. Le Voltaire լրագրէն)

Պարոն Տնօրէն,

Պատիւ ունեցայ արդէն կառավարութեան և հանրային կարծիքի ուշադրութիւնը հրաւիրել Արմենիաի վիճակին վրայ։ Շատ չնորհապարտ պիտի լինիմ ձեզ այսօր եթէ հաճիք թոյլատրել ինձ որ ձեր պատուական լրագրի միջոցով բացատրեմ իմ ներկայացուցած կարծիքս։ Գիտեմ որ ներկայ չահերի և եռանդուռ վիճաբանութեան մէջ տեղ արտաքին քաղաքականութեան պատահական դէպքերը չատ քիչ հետաքրքրաշարժ կրնան թուիլ. ուստի ես կը դիմեմ օրէնսդիրների բարձրը դատողութեան որոնք իրենց հայեցքը չեն կենդրոնացուներ Եւրոպաի մէկ կէտին վրայ միայն, այլ իրենց մտածման մէջ կընդգրկեն աշխարհն ու ապագան։ Կը խնդրեմ անոնցմէ պահ մի իրենց ուշադրութիւնը։

Ես այստեղ չպիտի մտնեմ մանրամասն և խորացնելն վիճաբանութեան մէջ արևելեան խնդրին վերաբերեալ իրաւագիտական ակդրուններուն վրայ։ Իրաւաբանների մեծ մասը կընդունին որ դիւրաւ լուծուելիք մի պարզ խնդիր չէ այս։ Ուրեմն սխալ է փաստաբանել թէ արևելեան խնդիրը վերլուծելով ուրիշ բան չենք գտներ վերջապէս, բայց միայն հաւատարիմ ըլլալ արևմտեան զօրութիւններուն իրարմէ գերազանցութեան խնդիրը։

Բայց ես արագ կանցնիմ այս վէճերի վրայէն և կուզեմ հասնիլ բուն իմ խօսելիք գլխաւոր առարկային և ներկայացնել մի քանի քննադատութիւններ որոնք ես հիմնաւոր կը կարծեմ, Եւրոպաի հեռաւոր կայք քաղաքականութեան մասին Արևելքի մէջ։

Արևելեան խնդրին նկատմամբ երկու տեսակ քաղաքականութիւն կայ որոց փոփոխակի կը դիմեն մեծ պետութիւնները իրարու վրայ անվստահութիւն ունենալով. մին բացատրութեան քաղաքականութիւնն է, միւսը գործունէութեան։ Առաջինը կը պահանջէ արգիլել և առջևն առնել այն դէպքերի որոնց անխուսափելի լինելը կը նախատեսենք. երկրորդն ալ կը թոյլատրէ կայսրութիւնների աղտարեր և օրհասական ճակատագրի կատարուելուն և մօտալուտ մի կործանումէ օգուտ քաղելու։ Արդի դիւանագիտութիւնը յայտնապէս ընդդրկած է այդ առաջին տեսակի քաղաքագիտութիւնը և կարծես թէ կը հրամայէ կառավարութիւններուն որ Թիւրքիոյ գործերուն նկատմամբ նախկին վիճակը պահեն յաւիտեան։

Իմ կարծիքով այդ քաղաքագիտութիւն կայր է և աչխարհի ալիտարեր։ Եւրոպան կուզէ պաչտպանել ազատութիւնը ամենուրեք ուր ազատնալիքի ենթարկուած է. նա ծածկած է ծովերը իր նաւերով. մարդասիրութեան ամենաշօրաւոր բնազդէն մղուած, նա զոհեց իր գաղթականութիւնները, գերութիւնը ջնջելու համար. նա կուզէ քաղաքակրթութեան դրօչակը պարզել նոյն իսկ ամենաբարբարոս երկիրներուն մէջ, և այսուամենայնիւ նա չուզեր որ իրարմէ անջատ ամրոցների մի չղթայ միջին դարի բռնութեան սըխրագին և մեայլ ստուերը արձակէ մինչև իր հրապարակների վրայ, մինչև ազատութեան այդ մայրաքաղաքի (Ֆրանսա) վրայ։ Այս ամենը կը պարունակի արևելեան խնդրին մէջ։

Արմենիան որա եզած է այժմ սոսկալի ճնշումների և այնտեղի ժողովուրդները կը հեծեն հարստահարութեան մէջ. ամբողջ մարդկութիւնը կը տառապի մի այնպիսի վարչութեան անպիտանութիւններուն որ բացարձակ ուրացումն է մարդկային ոեչ ընկերականութեան, որ կը ներկայացնէ բարբարոսութիւնը իր ամբողջ վայրենական վիճակին մէջ, որ մարդկային սեռի մտատանջ և կազմակերպեալ անձնասպանութեան մի դրութիւնն է։ Ահա այդ է այն գարչելի և խղճալի տեսարան զոր արևելեան ծանր խնդիրը կազմող տարրերէ մին կը ներկայացնէ։ Փաստները որոնք Կ. Պոլիսը կը զրկէ կարգ առ կարգ առանց ուրիշ պաշտօնի բայց եթէ Հայերի ձեռքէն յափշտակելու համար իրենց անհատական հատկութիները որ չատ աչխատութեամբ ձեռք բերած են և իրենց չուրջը անապատ դարձնելու համար. անկերթի հրատարակներ օրք երկրի մէջէն անցուդարձ կանեն զօրաբանակ առնունը կրելով. նահանգներ որոնք խոյս կուտան այդ զօրքերի մօտենալը տեսնելով. անհերկ դաչտեր, առանց կամուրջներուի և առանց թումբերի գետեր, անտէր հողեր, ծառի ճիւղերէ և հողէ չինուած տուներ, անտառների մէ մայրաքաղաք, աւերակներ և անապատ ամեն կողմ. ահա Արմենիան, ահա նախնի Հայաստանը։ Այդ աւերակի և քարուքանդի մէջտեղ որ ապրած են և կանեն անդադար մի քանի հազար թիւրքեր ամեն մէկ վիլայէթի մէջ, ամենքն ալ գիւղերին մէջ կեդրոնացած, թմրած, թուլացած, երբէք չաչխատող և օրէնքի կարգ անցած յափշտակութիւններով և քրիստոնեայ ժողովրդի աչխատութեամբը անպարկեչօրէն ապրող. ահա բնակիչներն, ահա տիրապետողներն այն նահանգի որ ամբողջ Թիւրքիոյ ամենագեղեցիկ նահանգն է։ Արդարև իր կլիման չատ գեղեցիկ է, իր երկիրը չատ արդիւնաբեր, իր բերքեր չատ յարգի և այլազան։ Իր լեռներ կը պարունակեն առատ հանքեր ոսկւոյ, արծաթի, պղնձի, երկաթի և կապարի, քարահատներ մարմարի և յասպիսի։ Մինչև անդամ ուզած են երկրային դրախտի տեղը հոն նշանակել։

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԻԱՅԷՆ

(Թարգմ. Փարիզի Soleil լրագրէն)

Ռուսական կառավարութիւնը Պերլինի դաչնագրի 61 րդ յօդուածի դրած պարտաւորութիւնը Բ. Դրնէն խնդրած լինելուն նկատմամբ Փարիզի Le Soleil լրագրին մէջ մի երկար թղթակցութիւն կը կարդանք Պետերբուրգէն իր մանսաւոր թղթակից դրուած։

Այդ թղթակցութեան մեզ կարևորագոյն մասը թարգմանելով կը հաղորդենք մեր ընթերցողներին։

Պետերբուրգ, 85 դեկտ. 28/9 Յունվար 86

ՎՐԴՈՎԻՉ ՇՇՈՒԿՆԵՐ.

Մի քանի օրէ ի վեր տարածուած ծանր չչուկները առևտուրի թուլութեան կը նպատակեն, թէև արդէն ալ չատ քիչ գործ կար։

Այդ չչուկների դիմաւորներէն մին որ կը յիչեք անչուչտ, արդէն ձեզ դրած եմ ժամանակին, այն մեծ տագնապն էր որ կուգար վրդովել Արեւելքը։ Մէկ ամիս յետոյ Ծագեցաւ Փիլիպէի յեղափոխութիւնը, որ գիտէք թէ ինչ հետևանքներ ունեցաւ։

Բայց Գալբանեան լեռների մէջ ծագած կռիւը կը սպառնայ առաջիկայ գարնան տարածուիլ մինչև Կովկասի սահմանը։

Սոյդ ապրիլէ իմացած եմ, որ Ռուսիան որոշած է Թիւրքիան պատհանել Պերլինի դաչնագրի 61 րդ յօդուածի գործադրութիւնը։ Հարկ չկայ մի մեծ գիտնական լինել կանխատեսելու համար թէ այս հռչակաւոր յօդուածը մէկ օր ամբողջ Արեւելքին մէջ հրդեհ պիտի պատճառէ։ Այս նիւթին վրայ մի քանի անգամ գրած եմ ձեզ։ Ներեցէք ինձ, քանի որ արդի հանդամանքները կը պահանջեն, այսօր համառօտակի ամփոփելով ներկայացնել այդ խնդիրը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ.

Սան-Ստեֆանոյի դաչնագիրը որ յաղթական Ռուսիան ընդունել տուաւ պարտեալ Թիւրքիային, զոր խօսքերով կը տարամերժէր Թիւրքա-Հայաստանի ինքնօրինութիւնը։ Պերլինի վեհաժողովը որ քննեց Իչնաթիէֆի այս դործ, հաստատեց այս յօդուած։ Հն յայտարարելին որ այնուհետև Սրմենիան պիտի ազատուէր Թիւրք բռչանների քմահաճ կառավարութենէն և անկախ վարչութիւն մը պիտի վարելէր քրիստոնեայ պաչտօնատարներէ կազմուած, որ պիտի ունենար իր սեփական օրէնքները և իր տեղային ինքնավարութեան ատիկատնամիւնը. մէկ խօսքով, մի հզատակ պետութիւն պիտի լինէր Սուլթանի պարզ դերիչխանութեանը տակ։

Թիւրքիան պարտաւորեցաւ չայժամ ընդունելու, բայց իր թագուն մտածմանն մէջ հաստատապէս որոշած լինելով որ երբէք Եւրոպաի կամքը չի գործադրէ։ Ամեն մարդ գիտէ Թիւրք քաղաքագիտութեան չայտարեցուցիչ հնարները։ 1878 էն ի վեր երկու անգամ պէտք եղաւ որ Եւրոպան Բ. Դրան վրայ ճնշում բանեցուցանէ Մօնթենեկրոյի (Ցուլչինոյի խնդիրը) և Ծունաստանի (Թեսալիաի և Եպիռոսի խնդիրը) վերաբերեալ պայմանների գործադրութեան համար։

Մի վերջին խնդիր, հայկական խնդիրը, կախ կը մնար։ Արդ Եւրոպական բոլոր տերութիւններէն Ռուսիան միայն ամենամեծ չահ ունէր այդ խնդիր լուծուելուն մէջ։

ԵՐԿՐՈՐԴ ԲՈԼՈՆԻԱ

Կար մի ժամանակ որ Ֆրանսան զրկուած և թշուառ ժողովուրդներին հոդածութիւն կանէր։ Լաւ ժամանակ եղաւ որ Ամերիկան ազատելու համար։ Շատ ժ ի օրով Յունաստանի համար։ Նաբոլէոն Գ ի օրով Իտալիան ազատելու համար։ Այսօր այլ ևս այնպէս չէ. 15 տարի առաջուան խիստ գասերը ազդային ինքնասիրութիւնը նորաձեւութիւն դարձուցած են, և դժալի կերպով մարած են մեր ազդի ատելատիան բնազդումները։ Ուրեմն ո՛վ, այս րոպէիս, Ֆրանսաի մէջ հոգ պիտի տանի Արմենիաի տառապանքներուն։ Այլ ոսկան, բոլոր քրիստոնեայ ցեղերին մէջ ամենէն արդահատելին է նա։ Երէք մտի բաժնուած է, նման Բօլօնիային։ Արմենիան հնթարկուած է միանգամայն Թիւրք, Ռուս և Պարսիկ իչխանութեան։ Այս քաջ փոքրիկ ժողովուրդը, որի վրայ երբեմն թագաւորած է Ֆրանսայի Լուսինեան գերդաստանը, տակաւին փոքր –Ասիոյ մէջ 6 միլիոն կը հաչուուի։ Նորա վրայ երէք տէրութիւններէն Թիւրքը, ի հարկէ ամենէն սրհատարհելին է։ Պէտք է Արևելքը այցելած լինել գիտնալու համար թէ մինչև ո՛ր աստիճան ատելութեան կրնայ հասնիլ, աւազակ քիւրտերի յուժ վայրագութիւնը որ անոնց կը հրամայեն զրկել անոնց կը հարստահարեն վանէն, Ուրմիայէն սկսեալ մինչև Էրզրում, մինչև Առատային լեռները։ Հայը խաղալիկ է իշխաններին ձեռք, որ անպատիժ կը կոտորեն, կը թալանեն և կը սպանեն անոր։

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԸ

Բայց երէք Արմենիան այլ ևս պետութիւն չունի իրաւագիտական, գէթ նա պետութիւն ունի իրը քրիստոնեայ եկեղեցի, իրը մի անկախ ազգ. և իր մեծ գլխաւորը, ընդհանուրին յարգուած, էջմիածնի մեծ վանքը բնակող երենց ընտրեալ Կաթուղիկոսն է։ Այդ Կաթողիկոսը Ռուսահպատակ է և էջմիածնի վանքը կը գտնուի Կովկասի նահանգին մէջ։ Ուրեմն Ցարը իրաց ընթացքին բերմամբը, թէ՛ իրը վեհապետ և թէ՛ իրը քրիստոնեայ, բնածին ճշմարիտ պաչտպանն է Արմենիաի։

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Աբրլպօթօ Մասս, Մ. Ն. Ա.
Յունվար 3, 1886

Պօլիչն հրատարակուող թերթե-ր միայն մէջ հետևեալ յօդուածն կարդացի որ թարգմանելով Ձեր խըմբագրութեան կը խրկեմ և կը խընդրեմ որ եթէ յարմար գտնէք, հրատարակէք զայն Ազդանուէր «Արմենիա»իդ մէջ։

Ամերիկեան Պօրտի միսիօնարք որք ի Թիւրքիական կայսրութեան, խել մի տարիներէ հետէ մեծ հետաքրքրութիւն կը կրեն Թիւրք պաչտօնեայներէ որոնք իրենց դործերի մեծ արդելք կը լինին։ Իրաղութիւնն այն է որ եթէ Ուսչինկթընի կառավարութենէն ազդու միջոցներ դործածուէին, այդ հետաքրքրութիւնների վերջ ճան կը տրուէր, և վասն այսորիկ Պօրտի Ամագ քարտուղար Պատ. Տօք. Ն. Կ. Քլարք մի նամակ ուղղած է առ Նախագահ Քլիվլենտ, խնդրոյն վերաբերեալ մի քանի իրողութիւններն ի մէջ բերելով. յետոյ խորհուրդ տուեցաւ կառավարութեան քարտուղար Պայարտի որ հրահանգ տայ դեսպան Քօքսին այս նկատմամբ։ Կ. Պօլսէ հասած վերջին լրոյ նայելով Պարոն Քօքս մեծ եռանդով այդ խնդրոյն ձեռնարկած է մի այնպիսի տրամա-

Հ. Ա. Ա. Ա

են դի հանրապետական դրութիւնը անչափ ժուժիւն չէ, այլ անդադար ջանք յառաջդիմութեան համար և մշտական աճումն ազատութեան։

—Երեւոհանական ժողովը 3 ձայնի առաւելութեամբ որոշեց ոտիպոլա-կանութիւն տալով օրակարգն անցու-նել Բօշֆօրի առաջարկը ընդհանուր և լիակատար ներողութիւն տալու համար քաղաքական յանցաւորներին։

—Լուիզ Միշել մի դումարում ապած է Փարիզ Բիվօլի սրահին մէջ ուր կար-միր և սև դրօշակներ պարզուած են և 2500 անձ ներկայ են եղեր։ Լուիզ Միշել իւր առնախօսութեան վերջը յայտարարեր է թէ կրէվիի իրեն ա-պած ներումը մի ապտակ էր իրեն համար և թէ այլևս Ֆրանսան թող-լով Ռուսիա պիտի երթայ յեղափո-խութիւն քարոզելու։

Կը հաստատեն թէ մօտ օրէն Մարսէյլ գալով, այստեղէն չոգենաւով պիտի անցնի Օաէսա։ Հանրի Բօշֆօր պիտի ընկերանայ իրեն մինչև Մարսէյլ։

—Կ. Գօլսի դեսպան Պ. ալ Նապլ իւր պաշտօնատեղի փոփոխութիւն խնդրած լինելով, կը կարծուի որ դեսպանական փոփոխութիւններ պի-տի լինին։

ՏԵՂԱԿԱՆ

Մօնթէնեգրոյի իշխանը որ ծպտեալ կը ճանապարհորդէ Պեռլինի խոր-հրդի նախագահ Գ. Բիսմարքի հետ, Նիսէն եկած է Մարսէյլ և այստեղէ կերթայ Փարիզ։

—Գ. Ս. Միրզայեանց, Մեռնդի ազ-նիւ տարիով 80 ֆրանգ նուիրեց հայ մատուռին։

Մի բարեզարդ հայուհի, Տիկին Ս. Կ., Ս. Սեդանին մի ծածկոյթ նուի-րեց զոր յատկապէս իւր ձեռքով գոր-ծած էր, Մեռնդի ազնիւ նուիրելու դիտաւորութեամբ։

Առևտրական Բարձրագոյն վարժա-րանի ուսանողներն ալ իրենց մէջ հանգանակութեամբ մամ նուիրած են սեդանին։

—Մարսէյլի նախկին քաղաքապետ Պ. Ռամանեի եչ. օր մեռած լինելով, երեկ մեծ հանդէսով թաղուեցաւ։ Պ. Ռամանեի Հանրապետութեան անձ-նուէր աշխատաւորներէն էր։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Ջէնընկէցութեան համար մեծ պե-տութիւններէն եղած առաջարկին պա-տասխանելով Պուլկարիան յայտարա-րած է թէ ինք պատրաստ է ղէնքն-կէց լինել եթէ Սերպիան որ օր բան օրէ ուրի սպառնական դէրք կը ստանայ, յանձն առնէ նախապէս ինք զէնընկէց լինել կամ եթէ մեծ պե-տութիւնները խաղաղութիւնը կեն-քանելուն համար երաշխաւորեն Պուլ-կարիան և ապահովցնեն իրեն թէ Սերպիոյ նպէն չպիտի արշաւեն պուլ-կարական հողերն։

Ծանօթատանն ալ սա խմաստով պա-տասխանած է։ «Փիլիպէի յեղափո-խութեամբն Պալքանեան թերակղզ-ին մէջ յարուցուած խնդիրները դեռ գոհացուցիչ մի լուծում ստացած չը-լինելով և խաղաղութիւնը կնքելու բանակցութիւններն անպատճառ սկը-սուած չլինելով, մի այսպիսի վիճակի մէջ Ծանօթատան չէ կարող անշարժ վիճակի մէջ դնել իւր զօրաբանակ և համաձայնութիւն յունվար 11 ի հատ-ուկան ծանուցագրի ղէնընկէցութեան հրաւէրին։»

Սերպիան ալ պատասխանած է թէ չընդունիր ղէնընկէցութիւնը խաղա-ղութեան կնքուելէն առաջ։

—Սերպիական կառավարութիւնը երկրորդ կարգի պահեստի զօրքերն նորէն դրօշակի տակ կանչած է յուն-վար 24ին համար։ Սերպիոյ այս ըն-թացք մի պատասխան կը համարուի մեծ պետութիւնների հատուկան ծանուցագրին։ Ընդհանրապէս կը կարծուի որ թշնամութիւնները ուշ կամ կանուխ պիտի վերսկսուին։

—Բ. Դուռը բէտիճ զօրքերի հա-րիւր վշտակը ալ դրօշակի տակ կան-չած է և կը չարունակէ թնդանօթ-ներ չինել տալ և ձիեր գնել։ Սուլ-թանը յանձնած նախարարական ժողով-ներ կը գումարէ։ Նաւահանգիստներին մէջ ռատիկ կաշխատին նաւատորմիղի պատրաստութեանը համար։

—Լուր կայ թէ մեծ պետութիւն-ները առաջինէն ուրի ոտիպոլիան ոճով մի նոր ծանուցագիր պիտի դրկեն Սերպիային և Ծունատանին դէ-նընկէցութեան համար։

—Բ. Դուռը գլխաւորապէս դրա-զուած է Ծունատանի բռնած դիրք-քին պատճառով։ Թուրք չրջանակ-ներին մէջ կը կարծուի որ Ալէքսանդր իշխանը չպիտի բաւականանայ Կազ-ան էֆէնտիի միջոցով բերանացի բանակցութեամբ, այլ ինք ուղղակի խնդիրը լուծելու բնութիւն ունեցող մի ձեռնարկ պիտի անէ։

—Հետզհետէ հատատութիւն կը գտնէ այն լուր թէ Պուլկարիան և Թիւրքիան ուղղակի իրենց մէջ պի-տի համաձայնին Պուլկարիոյ միու-թեան մասին։

—Բ. Դուռը առարկութիւն չպիտի անէ եթէ Ալէքսանդր իշխանը ըն-դունի որ խաղաղական բանակցու-թիւնները Պատքրեշի մէջ լինին։

—Աւստրիական նաւատորմիղը իւր կառավարութենէն հրահանգ ստա-ցած է Ցունական ջուրերին մէջ մինչև ի նոր հրաման։

—Օաէսայէն կիմացուին թէ ազդ-քա-ղաքի հելլենական հիւպատոսարանը հրաման ստացած է Ամերիկէն ոս ան-միջապէս Ծունատան գրկէ Օաէսա դանուած այն յոյներ որոց վիճակուած է պահեստի զօրք լինել։

—Պէլգրատէն կը հեռագրեն յուն-վար 12ին թէ մի քանի օրէ ի վեր Կ. Պօլսէն բազմութիւն ղէնքեր կը դրկուին, ի հարկին զինելու համար Սի-լիսկի մահմետական ամբողջ ժողո-վուրդը։

—Լուր կայ թէ Ռուսիան կընդու-նի կատարուած լրացութիւնը Բուսֆ-լիի մէջ. բայց պուլկար ժողովրդին մօտ իւր ազդեցութեան փայլը վե-րսին ունենալու համար Գուչկօվսկի անձնական միութենէն աւելի մի բան պիտի պահանջէ։ Ռուսիոյ այս նոր դիրք անհանդստութիւն կը պատ-ճառէ Աւստրիոյ։

—Ռուսիան Ալմանախի և Աւստրիոյ հետ համաձայնելու վրայ է, ղէնընկ-կեցութիւնը մերժող երեք փոքրիկ պետութիւնների դէմ խիստ միջոցներ ձեռք առնուելու մասին։ Բայց և ոչ մի պաշտօնական առաջարկութիւն դեռ չէ եղած։

—Կը հաստատեն թէ մեծ պետու-թիւններ նոր չանքեր սպած են Ծու-նական կառավարութեան մօտ որ դէմ դադրեցնէ իւր սպառազինութիւն-ները մինչ Բուսֆլիի խնդրին լուծումը։ Մանաւորապէս Ծովային տէրութիւն-ները, Հելլէն ժողովրդեան ամենամեծ համակրութիւն ցոյց տալով հանդերձ, կը ներկայացնեն այն ծանր հետե-ւանքները որ Միջերկրականի վրայ մի ծովային պատերազմ կրնայ յառաջ բերել եւրոպական տեսակէտով։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական Խորհրդարանը իւր նիստերը սկսած է Յունվար 21 ին։

Թագուհւոյն կողմէն կարդացուած ճառին մէջ բսուած է Բուսֆլիի նկատ-մամբ թէ Անգլիան ոչխատած է Ա-լէքսանդր իշխանի վարչութեան տակ դնել Բուսֆլիի բնակիչները իրենց փա-փաքի համեմատ և միանգամայն պահ-պանել Սուլթանին գերիշխանութիւնը։

Թագուհին յոյս յայտնած է տեւ-ական և հաշտարար կապակցութեան հաստատելու համար որ կը տիրէ Անգլիոյ մէջ։

—Կ. Պօլսէն կիմացուին թէ Յունվար 12ի գիշերը սաստիկ փոթորիկ ի-նեղով Ադրիական ծովին մէջ, մի քանի նաւեր իրենց բեռներով կորսուեր են։

Ա. Լիսօն Սրբիթիսօն յանձնման նաւը որ քարիւղ բարձած կուգար Պաթում-էն, Սմեռոպ բայերը ծովին մէջ բռնկեր է։

—Պետերբուրգի ոստիկանութիւնը Շինիլիսանելի մի ժողովատեղ գտած է Ասիլքին պալատին դէմը։ Մեծ քա-նակութեամբ ռումբեր և պայթուցիկ նիւթեր, ինչպէս նաև տպագրական մի մեքենայ և վառօդատար թուղթեր ձեռք անցուցեր են։ Շատ ձերբակալուած են։

—Պէռլինէն կը հեռագրեն Յունվար 22 ին թէ արմանական ծագումէ մի քանի Ամերիկացիներ որոնք հիւսի-սային Շլէզվիկի մէջ կը բնակէին, հրա-ման ստացան Բրանտիէն հեռանալ փետրվար 1 էն առաջ։ Արտաքսուղ-ները խնդրեցին ներքին գործերի նա-խարարէն որ մինչև Ապրիլ 1 պայմա-ժամ տրուի։ Իրենց խնդիրը ընդու-նուեցաւ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ կիս 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ » 20 »

Ձգ ծախուիս Մարսէյլ, «Ազմենիա» լրա-գրի խմբագրատունը։

Օտար բաղաքացիներին կը դրկուի փոս-տով, եթէ վերոյգրեալ գիներով Ֆրանսա-կան, բրբական կամ ռուսական փոստի բոքաղրոշմ դրկեն «Ազմենիա»ի խմբա-գրատեան։

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅ-ՍՐՆԱԿ ԳԱՒԱՌ ՍԱՐԻՆԵԱՆ ՏԱՃԿԱՍ-ՏԱՆԻ

ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԵՐ ՍԱՐԻՆ ԵՒ ԶԱՐԻՆ ՀՆԷՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՆՈՑ

= =

Մասն Ա. Բ. Գ. (առարտ)

Հայարնակ գաւառաց ընդհ. նկարա-գրութիւնն, տեղագրութիւնն, աշխար-հագրութիւնն, չէն և տնայի վանօրէից նկարագիրն, առանդութիւնք և այլ նիւ-թեր պարունակող Ա.զգ. գործ մի է, ամե-նակարևոր և հետաքրքրական գրուած չքջկահայաց և չատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յառաքելի վերծա-նութեան։

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով. կեդրոնատեղին է Պօլիս Պահէ-գափու հայագործի փոան դէմ Գ. էֆ. Ճոնեանի վաճառատուն, թիւ. 11։

Գին — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 գահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։

TRIBUNE DES PEUPLES

(Revue internationale du mouvement social dans les cinq parties du monde)

ADMINISTRATION :

Librairie des Deux-Mondes
Paris. — 17, rue de Loos. — Paris.

ABONNEMENT D'UN AN :

Union postale 6 francs, Département 5 francs, Paris 4 fr, le numéro 25 cent.

Le premier numéro de cette revue mensuelle qui vient de paraître est destiné à passionner tous ceux qui vivent dans le monde de la science et du mouvement social. — Nous y remarquons entres autres un article sur *la propriété* dû à la plume éloquente de l'illustre géographe *Elisée Reclus*, faisant ressortir tous les maux engendrés par la propriété individuelle, l'autre article intitulé : ***La révolution dans la médecine,*** par *Cassius*, enseigne les moyens de régénérer l'espèce humaine au moyen de la transfusion ; il ne s'agirait rien moins, paraît-il, que de prolonger la durée de la vie chez les vieillads et de rétablir la santé des malades. — Nous y lisons aussi *une revue du mouvement social dans les cinq parties du monde* des pays suivants : *Allemagne, Belgique, Hollande, Brésil, Chili, Chine, Espagne, France, Grèce, Iles Britanniques, Italie, Luxembourg, Mexique, Perse, République Argentine, Serbie, Suisse,* etc., etc., des plus intéressantes au point de vue socialiste, mais... nous ne voulons pas déflorer le plaisir de nos lecteurs ; qu'ils lisent eux mêmes cette revue, intéressante au plus haut degré.

P. S. — On peut s'abonner sans frais dans tous les bureaux de poste.

Envoi franco et gratis d'un numéro à titre spécimen.

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանցի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER
rue Vacon 50.